ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ՏԱՇԻՐ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Տաշիր-Ձորագետի թագավորություն հայտնի է նաև որպես Լոռու թագավորություն կամ Կյուրիկյանների թագավորություն, Բագրատունիների ենթակայության ներքո գտնվող ավատատիրական պետություն միջնադարյան Հայաստանում: Թագավորության հիմնադրման վերաբերյալ շրջանառվում են տարբեր թվականներ՝ 966-ից մինչև 988: Անկում է ապրել 1113 թվականին: Զբաղեցրել է Մեծ Հայքի Գուգարք նահանգի հարավային և արևելյան հատվածները, ինչպես նաև հյուսիսային Ուտիքը, այդ թվում՝ Գարդմանը և Փառիսոսը:

Հայ պատմագիտության մեջ լայն կիրառություն ունի «Տաշիր-Ձորագետ» պայմանական անվանումը. այն կապված է Վիրահայոց լեռներից սկիզբ առնող Տաշիր և Լոռվա սարահարթում հոսող Տաշիր և Ձորագետ գետերի անվանումների հետ:

Տաշիր-Ձորագետի թագավորությունը հիմնադրվում է Գուգարքում (մասնավորապես՝ Դեբեդ և Աղստև գետերի ավազանների ու հարակից գավառներում) հաստատված Բագրատունիների կրտսեր ճյուղի իշխանները՝ Կյուրիկյանները: Շուտով վերջիններս կարողանում են օգտվել Հայաստանի ներսում բռնկված ավատատիրական երկպառակությունից և ստեղծել սեփական կիսանկախ պետությունը՝ Տաշիր-Ձորագետի կամ Լոռու թագավորությունը, որը գոյատևում է շուրջ մեկ ու կես դար:

Այնուհետև Տաշիր-Ձորագետի թագավորությունը ընկնում է մոնղոլների և կարակոյունլու ու աղկոյունլու թուրքմենական պետությունների մեջ, իսկ պարսկական տիրապետության շրջանում Վրացական թագավորության կազմի մեջ: 1801 թ.-ին Վրաստանի և Հայաստանի հյուսիս-արևելյան հատվածի հետ միանում է Ռոմանովների ռուսական կայսրությանը, որպես Թիֆլիսի նահանգի Լոռի-Բորչալուի

գավառի, 1919-20 թվականներին՝ Լոռու «Չեզոք գոտու» մեջ:

Վորոնցովկա

Վորոնցովկան հիմնադրվել է 1844թ.-ին Ռուսական Կայսրության կառավարության կարգադրությամբ Սարատովի մարզից այստեղ տեղափոխված ռուսների կողմից և Կովկասի փոխարքայի անունով կոչվել է Վորոնցովկա և մինչև Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելը և նոր շրջանի ստեղծվելը, տարածքը կազմել է Փամբակ-Լոռու գավառի Վորոնցովկա գավառամասը:

Կալինինո



Կալինինոն է վերանվանվել 1935 թ.-ին հեղափոխական գործիչ Կալինինի անունով: 1961 թ.-ին դարձել է քաղաքատիպ ավան, իսկ 1983 թ դասվել է Հայաստանի քաղաքների շարքին:

Կալինինոյի շրջանի տարածությունը կազմել է 690 կմ2 է, բնակչությունը 39,1 հզ. (1987), խտությունը՝ 56,5 մարդ/կմ2: Սահմանակից է եղել Վրաց. ՍՍՀ–ին: Ունեցել է 1 քաղաք (Կալինինո) և 13 գյուղական բնակավայրեր՝ Բլագոդարնոյե, Գետավան, Դեմուրչիլար, էվլու, իլմազլու, Լեռնհովիտ, Կաթնառատ, Կալինինո, Կրուգլայա Շիշկա, Ղարսփսա, Ղարաղալա, Ղզըլդաշ, Ղզըլշաֆտկ, Մեդովկա, Մեծավան, Միխայելովկա, Նորաշեն, Նովոսելցովո, Պետրովկա, Պրիվոլնոյե, Սարատովկա, Սարչապետ, Սարիար, Սովուղբուլաղ: 1939-1945-ականների Երկրորդ Համաշխարհային պատերազմի մաս կազմած Մեծ Հայրենական պատերազմից անմասն չի մնացել նաև Կալինինոյի շրջանը՝ տալով մեծաթիվ զոհեր:

Տաշիր

Տաշիր է վերանվանվել 1991 թ. Տաշիր գավառի անունով:

1990-ական թթ., ինչպես հանրապետության մյուս տարածաշրջաններում, Տաշիրում ևս ստեղծվում է ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակ, որը բացասաբար է ազդում տարածաշրջանի զարգացման վրա:

Սկսվում է զանգվածային արտագաղթ, հիմնականում հետսովետական երկրներ՝ Ռուսաստան. Բելոռուս, Ուկրաինա, Ղազախստան, Լատվի և Լիտվիա: Իրավիճակը սկսում է կայունանալ 2000-ականներին:

Կալինինո շրջանի վարչական կենտրոնը: Բնակավայրը հիմնադրվել է 1844 թվականին ռուսական կայսրության կառավարության կարգադրությամբ՝ հիմնականում Սարատովի մարզից այստեղ տեղափոխված ռուսների և աքսորված ռուս մոլոկանների կողմից և Կովկասի փոխարքայի անունով կոչվել է Վորոնցովկա: 1935 թվականին վերանվանվել է Կալինինո հեղափոխական գործիչ Կալինինի անունով: 1961 թվականից դարձել է քաղաքատիպ ավան, իսկ 1983 թվականից դասվել Հայաստանի քաղաքների շարքին: Տաշիր է վերանվանվել 1991թվականին:

2017-թ.-ին Տաշիր համայնքը խոշորցվում է, ընդգրկելով 1 քաղաքային (Տաշիր) և 11 գուղական բնակավայրեր:

Եվս մեկ անգամ համայնքը խոշորանում է 2022թ-ին, իր մեջ ներառելով Տաշիր, Մեծավան և Սարչապետ խոշորացված համայնքները: Տաշիր համայնքի կազմում այսօր կա մեկ քաղաքային (Տաշիր) և 23 գյուղական բնակավայր:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Տաշիր համայնքը ունի ծովի մակարդակից 1500 մետր բարձրություն: Տաշիրի հեռավորությունը մարզկենտրոնից 52 կմ է, հեռավորությունը մայրաքաղաքից 163 կմ: Տաշիրով է անցնում միջպետական նշանակության Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստան մայրուղին: Տաշիրը մարզի 2-րդ այլընտրանքային հնարավորությունն է Վրաստանի Հանրապետություն դուրս գալու համար:

Տարածքը ընդգրկում է Լոռվա դաշտի մեծ մասն ու շրջակա լեռնաշղթաների կից լանջերը: Ռելիեֆը հիմնականում հարթավայրային է: Արևմուտքում Ջավախքի, հյուսիսում և արևելքում Վիրահայոց լեռներն են: Առավելագույն բարձրությունը 3196մ է (Աչքասար լ.): Տարածված են լեռնատափաստանային և լեռնամարգագետնային լանդշաֆտները: Կան շինանյութերի և բազմամետաղային հանքավայրեր: Տաշիրով հոսում է Տաշիր գետը, որը միախառնվելով Ձորագետին, լցվում է Դեբետ գետ:

Մերձալպյան և ալպյան գոտին ունի աղքատ կենդանական աշխարհ, որի պատճառը բնակլիմայական աննպաստ պայմաններն են: Այստեղ հանդիպում են լեռնային տափաստաններին բնորոշ կենդանիներ՝ աղվես, գայլ, նապաստակ, դաշտամուկ: Անասնապահության զարգացման հետևանքով այստեղ շատ են թափանցում գայլերը, որոնք վտանգավոր են անասունների համար: Թռչուններից տարածված է արագիլը:

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Կլիման բարեխառն է, հունվարի միջին ջերմաստիճանը՝ –4° C –ից մինչև – 12°C, հուլիսինը՝ 8–16°C, տարեկան տեղումները՝ 600–800 մմ, վեգետացիայի շրջանը՝ 60–150 օր:

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից	
1.1) Լեռնահովիտ	10,4 կմ
1.2) Կաթնառատ	15,9 կմ
1.3) Սարատովկա	5.2 կմ
1.4) Բլագոդարնոյե	11.6 կմ
1.5) Նովոսելցովո	9.4 կմ
1.6) Մեղվահովիտ	13.2 կմ
1.7) Դաշտադեմ	10.2 կմ
1.8) Մեդովկա	7.6 կմ
1.9) Գետավան	9.5 կմ
1.10) Նորամուտ	15 կմ
1.11) Կրուգլայա Շիշկա	8.1կմ
1.12) Սարչապետ	14.9կմ
1.13) Արծնի	14.8կմ
1.14) Ապավեն	15.2կմ
1.15) Նորաշեն	11.3կմ
1.16) Պրիվոլնոյե	15.5կմ
1.17) Պետրովկա	8.4կմ
1.18) Ձորամուտ	10.6կմ
1.19) Գոգավան	11.9կմ
1.20) Մեծավան	11.9կմ
1.21) Միխայլովկա	6.6կմ
1.22) Ձյունաշող	16.4կմ
1.23) Պաղաղբյուր	22.2կմ
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Վորոնցովկա

3.Համայնքի կենտրոնի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	163
3.2) մարզկենտրոնից (կմ)	52
3.3) պետական սահմանիցուղիղ գծով (կմ)	10
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	0
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	0
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	0
4.Համայնքի կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1500
5.Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	688.82/ 68882,09հա
6.Սահմանակից համայնքների անվանումները	Լոռի Բերդ, Ստեփանավան, Ալավերդի, Աշոցք
7.Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	tashirhamaynq@gmail.com
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	tashircity.am
9.Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	0254-2-22-41
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	0254-2-21-68
11.Համայնքի հեռախոսային կոդը	0254
12.Համայնքում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	այո, 2
13.Համայնքապետարանի փոստային դասիչը	2101
14.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	29358
2.Գրանցված ծնունդների քանակը	158
2.Մահացության դեպքերի քանակը	113
3.Ամուսնությունների քանակը	48
4. Ամուսնալուծությունների քանակը	29
5. Տնային տնտեսությունների թիվը	2911

6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	1030
7. Կենսաթոշակառուների քանակը	2615
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	168

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	4
2. Արվեստի դպրոցների քանակը	2
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	10
5. Հանրակրթական դպրոցների քանակը	19
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	1

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1.Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	1536.11
1. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	40
2. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	4807

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	60514.76
2. Բնակավայրերի հողեր (հա)	2247.77
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	457.71
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	334,29
5. Հատուկ նշանակության	234,40
6. Հատուկ պահպանվող տարածքների	141,94

7. Անտառային	4211,17
8. Ջրային	740,06
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	15133
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	4853
11. Խոզերի գլուխաքանակը	1193
12. Գյուղատնտեսական տեխնիկա	3
12.1 տրակտորներ (քանակը)	3
12.2 կոմբայններ (քանակը)	0
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	264

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	143
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	194.372
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	այո
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	145
6.2 Էքսկավատորների քանակը	11
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	70
6.4 Գրեյդերների քանակը	2
6.5 Աղբատար մեքենաների քանակը	2
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	2
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	1
6.9 Ավտոաշտարակների քանակը	3
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	69.5
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	այո.3
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.

1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը,	103
որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	74
2.Վարչական ղեկավարների թվաքանակը	17
3. Ավագանու անդամների օրենքով սահմանված թվաքանակը	21
4. Ավագանու անդամների փաստացի թվաքանակը	21

11. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	**Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները**
Ժամանակակից ստանդարտներին համապատասխան աղբավայրի, վերամշակման կետերի բացակայություն:	Որպես խնդրի լուծում առաջարկվում է կառուցել աղբավերամշակման կետ՝ վերամշակելով տեսակավորված աղբը:
Ներհամայնքային անբարեկարգ ճանապարհներ:	Սուբվենցիոն ծրագրերով և կառավարության աջակցությամբ՝ ասֆալտապատել և սալարկել Տաշիր համայնքի ներբնակավայրային և միջբնակավայրային ճանապարհները:
Ներբնակավայրային և ներքաղաքային տրանսպորտի բացակայություն:	Պետության և դրամաշնորհների աջակցությամբ ձեռք բերել համապատասխան տրանսպորտային միջոցներ և ներդնել ցանցում:
Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցում/նորոգում:	Սուբվենցիոն և դրամաշնորհների միջոցով վերանորոգել / կառուցել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը:
Տուրիստական ենթակառուցվածքների ստեղծում:	Համայնքի տարածքում, առկա ենթակառուցվածքները ընդլայնել և ստեղծել նորերը: